ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2026թ. **N---Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքկառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինայի փողոցը (սկսվում է Մեծարենցի փողոցի հատումից և ավարտվում Շահումյանի գերեզմանոցի սկզբնամասում) անվանափոխել Երվանդունիներ անվամբ՝ «Երվանդունիների փողոց»:

2. Համապատասխանաբար, անվանափոխել նաև

- Տիչինայի փողոցի 1-ին փակուղին (սկսվում է Տիչինայի փողոցի հատումից և ավարտվում նախկին «Մետաքս» գործարանի մոտ) ՝ «Երվանդունիների փողոցի 1-ին փակուղի» անվամբ:
- Տիչինայի փողոցի 2-րդ փակուղին (սկսվում է Տիչինայի փողոցից շրջանաձև հասնում՝ հ.01-007-0239-0075 կադաստրային ծածկագրով գույքին)՝ «Երվանդունիների փողոցի 2-րդ փակուղի» անվամբ:
- Տիչինայի փողոցի 1-ին նրբանցքը (սկսվում է Տիչինայի փողոցից և ավարտվում Վախթանգ Անանյան փողոցի հատման մասում՝ «Երվանդունիների փողոցի 1-ին նրբանցք» անվամբ:
- Տիչինայի փողոցի 2-րդ նրբանցքը (սկսվում է Տիչինայի փողոցի հատումից և ավարտվում Վախթանգ Անանյան փողոցի հատման մասում)՝ «Երվանդունիների փողոցի 2-րդ նրբանցք» անվամբ:
- Տիչինայի փողոցի 3-րդ նրբանցքը (սկսվում է ոռոգիչ ջրանցքի աջ ափի տարածքից և հասնում է Շահումյան 17-րդ փողոց)՝ «Երվանդունիների փողոցի 3-

րդ նրբանցք» անվամբ:

- Տիչինայի փողոցի 4-րդ նրբանցքը (սկսվում է Տիչինայի փողոցից և ավարտվում Վախթանգ Անանյան փողոցի հատման մասում)՝ «Երվանդունիների փողոցի 4-րդ նրբանցք» անվամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝ **ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 16-րդ կետն, առաջարկվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Տիչինայի փողոցն անվանափոխել Երվանդունիների անվամբ՝ «Երվանդունիների փողոց»՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Հայոց պետականությունը ունեցել է մի շարք արքայատոհմեր, որոնցից առաջինը և իրավամբ բուն հայկական արքայատոհմը հենց Երվանդունիներն են, սակայն, ցավոք, մինչ այսօր Երևանում չկա անվանակոչված որևէ փողոց նրանց անվամբ:

Երվանդունիների թագավորությունը հայկական պետությունն էր Հայկական լեռնաշխարհում՝ մ.թ.ա. 570 - 201թթ, հայոց ուրարտական թագավորությունից հետո ըստ էության առաջին պետական կազմավորումը:

Երվանդունիների կառավարման սկզբնական շրջանում Հայաստանի մայրաքաղաքն էր Տուշպա-Վանը՝ Վանի թագավորության արքաների նստավայրը: Արքայատոհմը կոչվում է հիմնադրի՝ Երվանդ Սակավակյացի անունով:

Որպես թագավորներ և սատրապներ նրանք Հայաստանում իշխել են մ.թ.ա. 570-201 թվականներին: Պատմահայր Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ մ.թ.ա. 7-րդ դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնվել էր Հայկազունների տոհմի իշխանությունը՝ Սկայորդու գլխավորությամբ:

Ըստ պատմիչի, հայոց նահապետ, Սկայորդու որդի Պարույրը միավորեց Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը և դաշինք կնքեց Մարաստանի ու Բաբելոնի հետ՝ ընդդեմ Ասորեստանի:

Մ.թ.ա. 612թ. դաշնակից զորքերը գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, որին մասնակցելու համար Պարույր նահապետը Մարաստանի արքայի կողմից թագադրվեց և ճանաչվեց Հայաստանի թագավոր: Երվանդ Ա-ն հայոց թագավոր Պարույրի ազգականներից էր:

Տիչինա փողոցը բավականին մեծ ու կարևոր փողոց է Երևան քաղաքում, սակայն այդ անունը որևէ աղերս չունի հայկական մշակույթի, պատմության կամ հանրային որևէ ոլորտի հետ:

Պավլո Տիչինան եղել է ՈՒԽՍՀ լուսավորության մինիստր (1943-1948), ուկրաինացի խորհրդային պետական և հասարակական գործիչ: Եղել է Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի

անդամ (1952-1959, այնուհետև՝ 1960-ից), ԽՍՀՄ II-V գումարումների Գերագույն սովետի դեպուտատ, 1953-1959 թվականներին՝ ՈւՍՍՀ Գերագույն սովետի նախագահ: 1954-1962 թվականներին՝ ԽՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի նախագահի տեղակալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և Երվանդունիների հիմնադիր վաստակը հայ պատմության մեջ, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝ **ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**